

րուն հետ բաղդատենք, որոնք մեր 63 թուականին զօրաւոր երկրաշարժներու խաղալիկ եղան, և զրեթէ ամէնն ալ հաստատուն կեցան, չենք կրնար չհաւատալ, որ եթէ բազամիշիուլյի տուներն հռովմէական բազարին տուներուն պէս հաստատուն և ըստ պատշաճի շինուած լինէին, այն սոսկալի աղիսից զո՞ն պիտի չգտնուէին:

Փոխանակ այս թշուառ քաղաքներուն բնակիչները միշտ խրճիթներու տակ բնակել դատապարտելու, շատ աղջկ պիտի լինի՝ եթէ դարձեալ իրենց տուները կանգնելու ձեռք զարնեն, հաստատուն հիմեր զներով, բաւ նիմերէ և ընտիր շաղախէ շինելով, զինաւոր պարիսաները երկաթէ պահանգներով ամրացնելով, խտալական ոնց յատակաց և ձեղուններու շինելու վատ կերպը մէկդի թողլով. և ահա այն ատեն տուներն՝ այնպիսի ցնցմանց կը դիմանան և չեն կարծանիր: Պ. Թաքրքինի, Հռովմէական Դրաբոյին Դիտարանին գիտնական տեսուչն որ երկայն ժամանակ Սիկիլիոյ մէջ բնակերէ, կը պատմէ թէ եանայի

կողերուն վրայ շինուած գեղերու բնակիչներն՝ իրենց պարտէղներուն մէջ փայտեայ պարզ խրճիթներ ալ ունին, ուր կ'ապաստանին երկրաշարժի ամենապարիկ նշան մ՛ալ զգալնուն պէս, և երբ վտանգն անցնի, վերստին տուներնին կը զառնան: ինչո՞ւ համար իսքիս կզգւոյն բնակիչն ալ նոյնպէս շեն դործեր. տարակոյս չկայ՝ որ այս արկածքն իրենց յառաջնմաց նշաններն ունին: իտալիոյ մէջ ամէն կողմէ թէ շարժական և թէ օդարանական դիտարաններ կը կանգնուին. իւրաքանչիւր տեղւոյ համար՝ մէկ գիտող բաւական է ժամանակին զդողովուրդն զդուշացընելու վլուանգէն: Բայց այն՝ որ անդարձան պիտի մնայ, կամ գէթ գարմանուելու համար շատ տարիներ պէտք է անցնին, այն վախին է՝ զոր օտարականաց վրայ աղբեց այս արկածն, որոնք երթալով կը բազմանային այն կղզւոյն մէջ ամառը անցընելու և լերմկաց մէջ լուացուելու համար, կզի մը՝ որ կանգնուած է պայծառ և գեղեցիկ երկնից տակ, սակայն գէշ և վուանդաւոր հիման վրայ:

ՍԿԻՒՐՔ

կենդանեաց մեզի ունեցած օդաակարութիւնն՝ ընդհանուր առմամք գիտենք, բայց թէ իւրաքանչիւրն ինչ օգուտ ունի՝ քաջ տեղեակ չենք: բանի մը սովորական կենդանեաց մատուցած ծառայութիւնքն ամենուն ծանօթ է, երկրագործութեան նախնական պիտոյից և կամ մարդուս անմիջական ծառայութեանց գործածուելուն համար: Բազմութեան անծանօթ կենդանեաց մին զՄկիւռ (Eucryps) կրնանք համարիլ:

կենդանաբանութեան մէջ Սկիւռք՝ ի Աստաւորաց (Mammifère) են, ու կը ծոլաց (Rongeur) կարգի կը վերաբերին, և այս կարգի կենդանեացմէ գրեթէ

մարդուս օգտակարագոյններէն կը նան համարուիլ: Յիրաւի բնութեամբ երկշու են և կէս մը վայրենի, սակայն այսու հանդերձ գիւրաւ կ'ընտանենան: Սկիւռներու զարմն բազմահարուստ է տեսակօք, և նոյն իսկ մի և նոյն տեսակի մէջ սակաւ ինչ տարրերութիւնք կը նկատուին: ումանք մնխրագոյն են, այլք շիկագոյն: սակայն զրեթէ ամէնքն ալ քիչ շատ մի և նոյն բարքն ու բնաւորութիւնն ունին: այնպէս որ եթէ ընդհանուր նկարագիր մը տանք՝ նոյնն ամէնուն ալ հաւասարապէս կրնայ ծառայել:

Սկիւռք՝ հլու, գեղեցիկ, վայելուչ, միանգամայն պնմեղ կենդանիներ են.

ոչ շաղղակեր և ոչ խոկ ֆիսասակար: Մ' եծ գլուխ մ'ունին, և ասոր երկու կողմերը տափակ է . քթերնին գէպ 'ի դուրս ցցուած. վերի շրթունքնին երկայն ու ստորինը կարճ: Ենօտից վրայ առջնի կողմը՝ երկերկու զօրաւոր հերձատամունք (Dent incisive) կան, յորոց ստորինք՝ լայն են: ինչպէս միւս ամէն կրծողք, նշյալքս նաև ասոնք՝ չնատամունք (Dent canine) չունին, և այն մասը բոլորովին զասարկ է . այս դատարկութենէն ետև լայն պասակներ ունեցող՝ փշտիկաւոր ազօրի ատամունք (Dent molaire) կու գան, որոց թիւն ստորին ծնօտի վրայ չորս հատ է , իսկ վերինին վրայ հինգ . սակայն

հինգերորդն ամենափոքր է և շուտով կը թօթափի : Բոցակն են, և իրենց խոչըր աչերն՝ որ զլուկնուն երկու կողմերը կը գտնուին, աւելի ական ջաց մօտ քան թէ քիմի, բոլորաձեւ են ու գէպ 'ի գուրս ցցուած : Ճակատնին լայն է, և ասոր հարթաթիւնը քը թիւ աղջութեան կը համապատասխանէ : Գույխնուն գագաթան յետակողմեան մասն՝ կարծես ուռած է ու քիչ մը վեր բարձրացած, և իրենց ականջներն ասոր քովերն են: Այնքան սուզ պարանոց մ'ունին որ զրեթէ 'ի զըլիոյ և յուսոց չի զանազանիր: Մարմնով միջահասակ են, թիկունքնին սովորաբար կամարաձեւ, և մարմնոյն



Պտղակեր Սկիւռք անտառաց մէջ:

վրայ դտնուող մազերն, որ գէպ 'ի վեր տնկուած կ'ըլլան և յետս խոնարհած, զիրենք շատ աւելի ստուար ու մեծ կ'երեցընեն . այս մազերէն երկարագոյնն մէկ քթաշափ մեծութիւն ունի:

Մրունքնին շատ երկայն չէ, սակայն սաքերնին մեծ և մասերնին ստուար . առջնի ստից վրայ չորս մատ ունին՝ որոնց քթամաստն երբեմն փշտիկաւոր է . իսկ ետևի ստից վրայ 'հինգ: կրունկնին հանդարտ կերպով գետնի վրայ կը հանդչի, անոր համար մեծաւ դիրութեամբ կանգուն կենալով՝ զանազան շարժմունքներ կը կատարեն. և երբ կրծելու բան մ'ունենան՝ ետևի ստից վրայ կը նատին, իսկ պոչնինները ի-

րենց ձեռաց տեղ կը ծառայեցընեն: Պոչերնին երկայն է ու բազմամազ, և ամենէն աւելի երկայն մազերը՝ ցըցունից նման ասոր երկու կողմանքը կը գտնուին, յորոց երկարագոյնքն երկու թիւաշափէ աւելի կ'ըլլան: Իրենց այս քեզ պոչը երբեմն վեր բարձրացընեւ: լով դէպ 'յառաջ կը բերեն, որպէս զի անով ծածկուին, և ասոր հովանւոյն տակը հանգստեամբ կը նստին: Այս փնջաձեւ և երկայն պոչն, որ մինչև գըլուինին կը բարձրանայ և իրը հովանի կը ծառայէ, իրենց գեղեցիկ կերպարանաց զեռ աւելի գեղեցկութիւն կը չնորհէ:

Սկիւռներու պարանոցի ստորոտն,

լանջին, անութները, ծղեաց ներքին երեսը և որովայնն սպիտակագոյն են. սոտրին ծնօտն և բարձից ներքին երեսն՝ կամ բոլորովին սպիտակ է և կամ մասամբ սպիտակ և կամ մասամբ շիկագոյն: Խակ մարմարոյն մնացեալ մասունքն փոփոխական դոյներ ունին, և կրնան ըլլալ շիկագոյն, մնիբարդոյն կամ թուիս: Մազերու արմատներն մոխրագոյն են, և ծայրերը չեկ կամ թխագոյն. և կամ երեք զյոներն ալ իրերաց հետ կը խառնուին:

Մորթերնուն այս մազերն ըստ եղանակաց կը փոփոխին, ինչպէս օրինակ իմ ձմեռն լմննուրու միջոցները. անոր համար ամառնային և ձմեռնային մազերն իրարմէ կը տարբերին, ու նորարյուք՝ թափածներէն աւելի շիկագոյն կըլլան:

Չայներնին զօրաւոր է, և նոյն իսկ կուղի (Fonine) ձայնէ աւելի սուր. երբեմն իրենց գժկամակութեան ու զայրութի միջոց բերաննին գոցելով՝ եղական ձայն մը կը հանեն:

Թեթեանդամ են, կայտառ, աշխայժ, զուարթ, արագաշարժ և վերջին ասոտիճանի ճարտար. վայելուշ կերպարանօթ և մարմնով ջղային. վերջապէս, թեթեսութեամբ թաշնոց կը հաւասարին, և անոնց պէս ծառոց վրայ կը բընկին ու հսն բոյներնին կը շինեն: Շարունակ ընդասանըլով՝ կը քալեն. այնպիսի սրածայր եղունգներ ունին և անանկ երագ շարժմունք, որ ողորկակեղին քարձը ծառերը ճանկելով՝ մանրերկորդքի մէջ իսկային անոնց գագաթը կը բարձրանան: Այս զանազան շարժմունքները կատարելու համար, իրենք իրենց մասնաւոր ոյժ կամ բանութիւն մը շին տար. ինչպէս որ կը վազեն՝ այսպէս ալ զիւրութեամբ կը ճանկեն և կ'սատնուն: Ծառէ ծառ ցատկելով՝ ահագին անապուց մէջ շարունակ կը զուարձանան, և երբեք անոնցմէ վարչեն իշնար՝ քանի որ ուժգին հողմնունք զանոնք զօրաւոր կերպով շնցեն: Սակայն այսպէս սատնըլով արգեօք երբեք կը ֆնասաւին. ոչ բնաւու:

բաշարժ և առաձգական մարմինն մոռւնին, և պոչերնուն երկայնութիւնն այս շարժմանց մէջ իրենց մեծապէս կ'օգնէ:

Սովորաբար զաշտաց մէջ շեն զրտնուիր, բաց տեղուանք չեն բնակիր, բնակութեանց շեն մերձենար, հասանելի անտառաց մէջ շեն կենար, այլ շարունակ հին և գեղեցիկ բարձր ծառեր կը փնտուեն: Ամենեին գարշ շեն հոտիր, վերջին աստիճանի մաքուր են ու մաքրութիւն կը սիրեն: և մեծաւ մասամբ իրենց ժամանակը սանարուելով ու մաքրուելով կ'անցնեն: Զմեռնային եղանակի մէջ լունեսից (Loire) նման շեն թմրիր, այլ միշտ արթուն կը կենան. և հազիւ թէ մէկն մերձենալու ըլլայ այն ծառին ստորոտը՝ որոյ վրայ ասոնք կը բնակին, իսկոյն իրենց բունէն ենելով՝ կամ ուրիշ ծառի վըրայ կը ցատքին, և կամ ճիւղի մը ապահովագոյն մասին վրայ կ'ապաստանին:

Ամառնային գեղեցիկ դիշերները՝ Սկիւռք ծառոց վրայ իրարու եսեւէ ընթանալով՝ կը սկսին վազվազել և աղաղակել. օրն ողջոյն բնակարաննուն մէջ փակեալ կը կենան, և երեկոյեան միայն անկից դուրս ենելով՝ կը զուարձանան, կը շարժին, կը խաղան և կ'ստեն: Իրենց այս բնակարանն տեսակ մը բոլորածն, մաքուր, վայելուչ և ներմէ հիւղիկ է, որոյ մէջ երբեք անձին չի կրնար մանել: Սովորաբար բարձրագոյն ծառոց գագաթը՝ ճիւղերու խաչածն բաժանման մէջ զայն կը զործեն ու կը հասաւատեն: Նախ և առաջ կը սկսին մանր վայտի կտորուանք և ծեղեր բերել, զորս մամուց հետ կը հիւսեն: յետոյ ներքուստ կը կոփիկըստեն, կը պնդացցնեն, և ընդարձակելով լաւ ևս կ'ամրացընեն: Այս եղանակաւ այնքան կը մեծնայ և կ'ամրանայ, որ հայր և մայր ճագերնուն հետ՝ հանգըստեամբ և ապահովութեամբ մէջը կը բնակին:

Բնակարաննին վերին կողմը նեղ բացուածք մը կայ ուսկից հազիւ կրնան անցնիլ արտաքս ենելու ու ներս մըտ-

նելու համար . իսկ այս բացուածքին վը-
րայ տեսակ մը կոնածե ծածք կը զրո-
նուի , որ զբնակարանը բոլորպին կ'ա-
պահովցընէ . վասն զի ոչ մարմին մը
մէջը կրնայ ինկնալ , և ոչ ալ անձրեւ
թափանցել , այլ ծածքին վրայէն սա-
հերով բնակարանի կողերէն յերկիր
կ'ինէ :

Բայց քանի մը տեսակներ՝ իրենց
բնակութիւնը գետոնի տակ՝ ծառոց
արմատներու յատակը կը հաստատեն :

Ըստ տեսակաց՝ կամ ընկերութեամբ
կամ առանձին կ'ապրին . սակայն ա-
ռանձին եղած միջնին ալ արու և էգ
մէկահզ կը կենան . Այսոնք միւս քանի
մը Սանաւոր կենդանեաց չեն նմանիր ,
որ դեռ ծագենին շնած իրարմէ կը
բաժնուին , այլ միշտ բնակութիւնին
՚ի միասին է : Հգերն ասովորաբար երեք ,
չորս և կամ հինգ ծագ յառաջ կը բե-
րեն , որոց վրայ մայրն ստոյդ մայրա-
կան քաղցր գութ և ուր մը կը յայտ-
նէ . միշտ հետերնին է զիրենք վտանգ-
ներէ փրկելու համար , և դուրգուրա-
լով զանոնք անդադար կը հոգայ ու կը
խնամէ : Իրենց վրայ ունեցած մեծ սի-
րոյն պատճառաւ , նախ քան իր յղու-
թիւնը՝ խնամքով քանի մը բոյներ
պատրաստած է : Իրարմէ բաւական հե-
ռաւորութեամբ . և կը տեսնենք յա-
ճախ՝ որ առանց իսկ վտանգ մը երե-
նալու , միայն խոհեմութեան համար ,
շատ անդամ իւր ծագերը բերանն ա-
ռած միւս բյոյներուն մէջ կը փոխաղը-
րէ : Հաղին թէ առաւօտեան արշալցոն
կ'ենէ , մէկէն զանոնք վարժեցընելու
և կրթելու նպատակաւ՝ բնակարաննէն
վար խոսի վրայ կ'ինցընէ . և եթէ
նոյն վայրէնին տեսնէ որ վտանգ մը
մէրձենալու վրայ է , առանց յապա-
զելու անըմբունելի արագութեամբ , ա-
ռանձին առանձին զանոնք մերձաւոր
ծառի մը առահովագոյն մասին վրայ
կը տեղաւորէ , և յետոյ գութալով՝ ի-
րենց բնակարանը կը փոխադրէ :


Սկիւոներու սովորական կիրակուր-
ներն են՝ պատուղ , նոշ , կաղին , խո-
զակ , խողկալին , շագանակ , և այլն .

իսկ հիւսիսային երկիրներու մէջ նահ
այլ և այլ ծառոց պտուղներ : Դար-
ձեալ , եթէ թուշնոց բոյն գտնան՝ մէջի
հաւկիթմները բոլոր կ'ուտեն և ծագերը
կը սպաննեն : Չոր պտոց պնդագոյն
կեղեանքն՝ վերջին աստիճանի դիւրու-
թեամբ կը խորտակեն . և ամառնային
եղանակի մէջ մեծաւ ճարտարու-
թեամբ ու խելքը՝ վերցիշեալ չոր պը-
տուղները քանի մը հին ծառոց բունե-
րուն և ճնկըբերուն մէջ կը համբարեն ,
որը յետոյ ձմեռը իրենց պիտոյքը կը
լցցնին : Առատութեամբ պաշար ժո-
ղովելով այլ և այլ ծառոց մէջ զիցած
են , որպէս զի եթէ ասոնցմէ մին գի .
պուածով աւերի կամ գողցուի , գո-
նեա միւսներն անարասա մնան : Քանի
մը տեսակներ գետնի տակ կը համբա-
րեն , և եթէ ձիւնն զասոնք ծածկէ ,
իրենց ոտիւք զայն կը հեռացընեն .
սուր յիշողութիւն մունին , զոր գոր-
ծածելու ժամանակը խիստ աղէկ զի-
տեն :

Սկիւոք պտղակեր և հատակեր ըլ-
լալով՝ արտերու մեծամեծ վնասուց
պատճառ կ'ըլլան , և եթէ բազմու-
թեամբ ու խմբովին այն տեղերը հա-
նին , գիշերուան մը մէջ զանոնք կը
սպառեն և կ'ապականեն : Քամլիւր ճա-
նապարհորդութեան մէջ կը զրէ՝ թէ
՚ի թենսիլլուանիս բազմաստեակ Սկիւ-
ներ կան , յորոց՝ աւելի փոքր տեսակ-
ներու վրայ խնամք կը տանին , որք
թէպէտ և դժուարաւ կ'ընտանենան ,
սակայն միւսներէն աւելի գեղեցիկ են :
Մեծ տեսամիներն մնացորենի անբաւ
վնասներ կը հասցընեն , վտան զի հաս-
կերուն վրայ եղնելով՝ զանոնք երկու
կը խորտակեն , միջուկը ուտելու նպա-
տակաւ . երբեմն հարիւրաւորք արտե-
րու կը հանդիպին , և յաճախ գիշե-
րուան մը մէջ վերուսա՞ի վայր կ'ա-
պականեն : Զասոնք ջնջելու համար ա-
մենայն ջանք կը բանցուիք . միսերնին
կ'ուտեն , սակայն իրենց մորթը շատ
բանի չի գար :

Մոխրագոյն Սկիւոք , փտտած ծա-
ռերու վրայ մամնով և յարդով բնա-

կարաննին կը շինեն. անտառի ծառոց
պտուղները կ'ուտեն. սակայն ասոնց | գասէ: Չմեռուան պաշար կը համբա-
համար ալ մորացորենն միշտ վերա- | րեն և սաստիկ ցուրտ եղած միջոց՝ քնա-
կարաննին դուրս չեն ելներ: Այսու



Սկիւռաց ջրէ անցնելին:

Հանդերձ ոչ միայն մորացորենի մեծա- | երեցած ծաղիկները ջարդելով՝ կազ-
մեծ վնասուց պատճառ կ'ըլլան, այլ | նիք գրեթէ պտուղ չեն տար: Թուիթէ
նաև կաշնեաց. վասն զի ասոնց վրայ | արդի ժամանակներս բենախլուանիոյ

արտերուն մէջ ասոնք առաւել ևս քաղմացած ըլլան, և այնքան առաւել՝ որբան մօրացորենի մշտկութիւնն յառաջացեր է. վասն զի՞ ի վլր քան զամենայն ասով կը սնանին:

Սկիւռք այնպիսի ճարտար ու ճարպիկ կենդանիներ են, որ չըսենք անհնարին, սակայն ամենադժուար է թէ առանձին որսորդ մը կարենոյ ասոնց. մէ ձեռք ձգել: Վասն զի վտանգներէ փախչելու համար ամենայն հնարք կը բանեցընեն. ծառերու բռնին ետևը կը պահաւըտին, և որպէս զի կարենան թշնամոյն ձեռքէն ազատիկ կը սկսին պտոյտներ տալ, բայց միշտ ծածկեալ մնալով յաշաց. և վերջապէս ցատկելով մը այնպիսի երագութեամբ ծառին գագաթը կը բարձրանան՝ որ իսկոյն ողջ առաջը իրենց բնակորանը հասած են: Հոն անյարժ ու անտեսանելի կը կենան՝ մինչև որ վտանգի հետքն ալ մէջտեղէն վերցուի:

Յիրաւի, թէպէտ և Սկիւռք ծառերէն երկրիս վրայ շատ չեն իշնար, սակայն երկրէս աւելի՛ ի յրոյ կը վախեն. և երբ զայն կարել հարկազրութի՞ն զարմանալի կերպով կը լողան. ծառոց կեղեր լաստափայտի տեղ կը ծառայեցնեն և անով զլուրը կ'անցնին: Պիտի ֆոն և ուրիշ քանի մը հեղինակներ կ'ըսեն, թէ ասոնք լողալու միջոց իրենց

պոյը զեկի տեղ կը գործածեն. սակայն ասոնց ըստածը սայոյ չէ: Քլէն մեզ զայս ինչ կաւանդէ, թէ երլ Սկիւռք յրէ անցնիլ ուզեն, թեթև փայտ մը մէջը ձգելով՝ անոր վրայ կը նատին. և իրենց պոյը շարժելով առադասատի տեղ կը ծառայեցընեն. և այսպէս խաղալ յրաց երեսէն կ'երթան:

Բայց եթէ այս միջոցիս գիտաւածով զօրաւոր հոգմ մը շնչէ և կամ ծովը խոլովիլու ըլլայ՝ երամովին ջրոց մէջ սուզելով կը խցդուին:

Սկիւռք հիւսիսային Ամերիկայի մէջ, յլսիս, յեւրոպա և յԱրկիրկէ լի են, թէ բազմատեսակ զարմերով, և թէ միանգամայն նոյն տեսակաց վերջին աստիճանի բազմանալով: Իրենց քաղցրութեան, աշխուժութեան ու գեղեցկութեան համար մարդուս սիրելի եղած են. և այն պատճառաւ զառնք տուներու մէջ կը պահեն, և կ'ընտանեան: Յիրաւի, երբեմն մարդկանց ավետալի վնասաւց պատճառ կ'ըլլան, ինչպէս ըսինք, սակայն ունին նաև իրենց օգուտներն. տասնց միուը պատուական և ախորժելի կերպակուր կ'ըլլայ. մորթերնին արուեստով պատրաստուել ետև մարդուս հազար աեսակ պիտոյից կը ծառայէ. և իրենց պոյի մազերը՝ նկարչաց վրձիններ շինելու կը դործածուին:

Հ. Պ. ՔԱԶՅԱՆՅԵԱՆ

Ներկային և անցելոյն ձամապարհորդութիւնք: — Թէ որդափ արագութեամբ՝ համեմատութեամբ անցելոյն՝ այժմ երկայն շամբարդութիւնք կը կատարուին, հետեւալ հաւուեն կրնայ իմացուիլ: — Ասկէ կէս դար առաջ կամ միշտ ըսելով 1830 տարւոյն մէջ՝ Անդրկայս Բարեյուաց Գլուխն երթալու համար՝ գրեթէ երկուու ու կէս ամիս պէտք էին: ՚ի Պոմպէյ Հնդկաց երթալու համար չորս ամիս, յիւսարալիս՝ 130 օր. միջեւսաներկայ ժամանակս երեք շարժեան մէջ Բարեյուաց Գլուխն 18 օրուան մէջ՝ ՚ի Պոմպէյ և 43 օրուան մէջ՝ ՚ի Սիւնէյ (Սաստարալիս) Կ'երթցուուի: — Դարձեալ, հոյնպէս յԱնդրկայ մեկնելով 40 օր պէտք էին հասնելու համար ՚ի Նիւ-Եօրը, 42 օր՝ ՚ի Ճիշմայքան, 56 օր՝ ՚ի Խիշ-Ժանիերոյ, 110 օր՝ ՚ի Վալբարայեց, իսկ այժմ՝ 10 օրուան մէջ կը հանուի ՚ի Նիւ-Եօրք, 18 օրուան մէջ՝ ՚ի Շամայիքա, 21 օրուան մէջ՝ ՚ի Ոիդ-Ժանիերոյ և 39 առուրց մէջ՝ ՚ի Վալբարայեց. որ է ըսել՝ հիմակուան ձանապարհորդութեանց համար պէտք եղած ժամանակն միջն հաշուուի երրորդ մասն է այն ժամանակին որ կարևոր էր յիսուն տարի առաջ: